ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 6/7

31 մարտի 2016 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2014թ. սեպտեմբերի 26-ի նիստում) (այսուհետ՝ Կանոնակար՝) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Կանոնակարգը լրացնել 10.14.-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«Երևանի պետական համալսարանի կողմից անցկացվող դպրոցականների օլիմպիադայում 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմի արժանացած ուսանողներին»:

1.2. Կանոնակարգի 11.6.-րդ ենթակետում «10 տոկոսով» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն կանոնակարգի 10.9.-րդ և 10.14-րդ ենթակետերով սահմանված դեպքերի:»:

1.3. Կանոնակարգը լրացնել 11.7.-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«11.7. Սույն կանոնակարգի 10.14.-րդ ենթակետում նշված դեպքերում՝ 1-ին կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 50 տոկոսի չափով, 2-րդ կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 40 տոկոսի չափով և 3-րդ կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 30 տոկոսի չափով: Կանոնակարգի 10.14.-րդ կետով սահմանված ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումն ուսանողին տրամադրվում է միայն ուսումնառության 1-ին կուրսում:»:

1.4. Կանոնակարգի 17-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«17. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած, այլ բուհերից, Երևանի պետական համալսարանի այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա, կամ առկա ուսումնառության համակարգից հեռակա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները, ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել Երևանի պետական համալսարանում տվյալ մասնագիտությունում, առկա ուսուցման համակարգում մեկ ուսումնական տարի սովորելուց հետո, իսկ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ առկա և հեռակա ուսումնառության համակարգում մեկ կիսամյակ սովորելուց հետո:»:

1.5. Կանոնակարգի 18-րդ կետում «10.12.-րդ կետով» բառերը փոխարինել «10.12-րդ և 10.14.-րդ կետերով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016թ. սեպտեմբերի 1-ից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ